նին՝ «Զրննար նար»ի մէջ  
դեր ստանձնելէ ետք, փա-  
րիզաբնակ լիբանանցի  
դերասան Նիտէ Ուաքիմ  
կը պատրաստուի դեր  
ստանձնել լիբանանեան  
նոր ժապավենի մը մէջ:

Լիբանանեան արդի  
շարժապատկերին ծանօթ  
շատ քիչեր գիտեն Նիտէ  
Ուաքիմին անունը: Հա-  
ւանաբար այն պատճա-  
ռով, որ երիտասարդ այս  
բեմադրիչը Լիբանանի  
քաղաքացիական պատե-  
րազմի առաջին օրերէն  
հեռացած է Լիբանանէն  
եւ հաստատուած է  
Ֆրանսա: Սակայն ան կը  
տիրապետէ արաբերէն  
լեզուին եւ անոր շնորհիւ  
դերեր կը ստանձնէ լիբա-  
նանեան շարժապատկե-  
րին ու թատրոնին մէջ:

Նիտէ Ուաքիմ դերա-  
սանութեան հանդէպ հա-  
կում ցուցաբերած է  
փոքր տարիքէն: Անոր  
դերասանական ասպա-  
րէզը սկսած է դպրոցա-  
կան բեմերու վրայ: Իր  
ճնողքին փափաքին ըն-  
դառաջելով, Լուս Անճելը-  
սի մէջ ուսանած է երեւոյ-  
տագիտութիւն՝ միաժա-  
մանակ իր զատ ժամերը  
նուիրելով դերասանու-  
թեան: Զուգահեռ մէջ  
դրամատիկայի պաշտոն-  
եայ եղած շրջանին պա-  
տահամար թերթի մը մէջ  
կը կարդայ Ֆրանսական  
թատերախումբի մը ծա-  
նուցումը, որ կը յայտա-  
բարէր, թէ կարիքը ունի  
արհեստավար դերասա-  
նի մը: Իր դերասանական  
առաջին դերերը ան  
ստանձնած է այդ թատե-  
րախումբին հետ՝ խեն-  
թերը կը խաղան՝ թատե-  
րական ներկայացումին  
մէջ: Իր անդրանիկ ելոյ-  
թով իսկ ան յմրդած է



տիրանալ գուցեբրիական  
նշանաւոր «Ռոնէ Հա-  
պիպ» մրցանակին, որուն  
նիւթական վարձատրու-  
թիւնը կը հասնի երեսուն  
հազար տոլարի:

Նիտէ Ուաքիմ դերա-  
սանական իր ասպարէզը  
կը շարունակէ Փարիզի  
մէջ, ուր մաս կը կազմէ  
Փիեր Լուի թատերա-  
խումբին: Այդ խումբին  
հետ անոր գործունէու-  
թիւնը կը սկսի «Պաստա-  
ուէն հեռու եւ մօտ» թա-  
տերախաղով եւ կը շա-  
րունակուի տասնեակ մը  
ուրիշներով:



դերասաններու կողքին  
երկրորդական դերեր  
ստանձնած Ուաքիմ իր  
այս փորձառութեան մա-  
սին խօսելով, կ'ըսէ: «Մե-  
ծերու կողքին նոյնիսկ  
այդ փոքր դերեր ստան-  
նելը շատ կարեւոր փոր-  
ձառութիւն է դէպի  
ասպարէն նայող արուես-  
տագէտի մը համար: Աշ-  
ակերտի նման անոնց  
կը հետեւի» օգտուելու

համար անոնց գիտելիք-  
ներէն»:  
Դերասանական ար-  
ւեստի այս նուիրեալին,  
իր բնորոշումով՝ «ար-  
հեստավարտ խենթ»ին  
ստանձնած գրեթէ բոլոր  
դերերը այս կամ այն ձե-  
ւով կապ ունին խելագա-  
րութեան հետ: Սակայն  
տաղանթի մը համար  
ստանձնել սովորական  
անձերու դերերը՝ «աւելի

լաւ կարենալ տիրապետե-  
լու համար խորունկ  
զգացումներու եւ տար-  
բեր ապրումներ արտա-  
յայտելու արուեստին»:  
Ֆրանսական շարժա-  
պատկերին մէջ աստղի մը  
վերածուելու կարելիու-  
թեան մասին խօսելով,  
Նիտէ Ուաքիմ, վստահօ-  
րէն կը յայտնէ, որ ամէն  
առիթ ունի տիրական  
դէմք դառնալու Ֆրան-  
սական շարժապատկե-  
րէն ներս:

Իր ապրած տարբեր  
միջավայրերուն կենսա-  
փորձով հարստացած  
Ուաքիմ այսօր վերա-  
դարձած է Լիբանան՝ լի-  
բանանեան շարժապատ-  
կերի զարթօնքին նուիր-  
ւած ժապավենի մը պատ-  
րաստութեան մասնակ-  
ցելու համար: Ան այս ծի-  
րէն ներս կը դիտէ «Զրն-  
նար նար»ի մէջ իր մաս-  
նակցութիւնը:

## Շաբթուան Ժապաւենը «ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ-2» ՏՈՒՐՔ ԿՈՒ ՏԱՅ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆԻՆ



Թոնի Շալիուպ, Թոնի Լի ճոնզ եւ  
Ուիլ Սմիթ՝ «ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ-2»ի մէջ

Հինգ տարի առաջ իր ներկայացուցած Գի-  
թին իւրայատկութեան եւ արտերկրային ցո-  
րեակներու ու այլ կերպարներու ստեղծած հե-  
տաքրքրութեան շնորհիւ մեծ յաջողութիւն ար-  
ձանագրած «ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ» ժապավենին ցո-  
րերկրորդ մասը առաւելագոյն չափով կապ-  
ւած է առաջինին եւ ձեռով մը կը հանդիսանայ  
անոր ամբողջացումը:

Այս պատճառով ալ երկրորդին մասին խօ-  
սելէ առաջ անհրաժեշտ է անդրադարձաւ առա-  
ջինին Գիթին ու արժարձակ հարցերուն:

Երկրորդին Գման, բեմադրիչ Պէրի Սոնըն-  
ֆելտի կողմէ բեմադրուած առաջին «ՄԵՆ ԻՆ  
ՊԼԷՔ»ը գիտաբերական կապակցութեամբ ար-  
տերկրային էակներով խնդրուած ժապավեննե-  
րուն տուաւ այն նորութիւնը, ինչի որ պէտք  
ուներին. սեւ հագուստներ, արեւու սեւ պնդո-  
ցներ եւ պաղարիւնութիւն: Այս մթնոլորտին  
ստեղծման մէջ մեծ դերակատարութիւն ունե-  
ցած ժապավենին գլխավոր դերասանները՝ Ուիլ  
Սմիթ եւ Թոնի Լի ճոնզ:

«ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ-2»ին մէջ այս դերասանները  
մեծ պատգաւ կը վերադարձան պետական

խիստ գաղտնի կազմակերպութեան մը՝ ՄԵՆ  
ԻՆ ՊԼԷՔի գործակալներ ձէյի եւ Քէյի դերե-  
րով: Այս կազմակերպութիւնը կը հսկէ Երկիր  
այցելող արտերկրային գաղտնի էակներու  
երկրային գործունէութեան: Ժապավենին  
առաջին բաժինը տեսողները կրնան յիշել, որ  
գլխավոր գործակալ Քէյ (Թոնի Լի ճոնզ) կը  
մերժէ այլ մոլորակներէ եկած պատգամաւոր-  
ներու լոյսը երկրի վրայ պահելու խնդրանքը:  
Քսանդինգ տարի ետք չար ուժի խորհրդանիշ  
Սերիլինա (Լարա Ֆլինն Պոլլը), հրապարիչ  
բնորոշիկի կերպարով ծայտուած, կու գայ Եր-  
կիր վերատիրանալու համար լոյսին: Այս բո-  
լոր անցուղարձակում մանրամասնութեան  
տեղեակ է գործակալ Քէյ, որ սակայն ժապա-  
ւենին առաջին բաժինին վերջաւորութեան  
գրկուած է իր յիշողութեան (Գեյնը, որ իրենց  
պաշտօնավարութեան աւարտին, կազմակեր-  
պութեան բոլոր գործակալները գաղտնագա-  
րութեան համար կը գրկուին իրենց յիշողու-  
թեան): Այստեղ կը սկսի գարգանալ ժապաւե-  
նին ցոյցը: Գործակալ ձէյ (Ուիլ Սմիթ) ամէն գնով  
պէտք է գործակալ Քէյին վերադարձնէ անոր յի-  
շողութիւնը, որպէսզի անգամ մը եւս կարելի ըլ-  
լայ իրկիրը փրկել Սերիլինայի արտօնը:

Ժապավենին առաջին բաժնի մը վայրկեան-  
ներէն իսկ յստակ է, որ դիպաշարին առաջնա-  
հերթ հարցն է երկու նախկին պաշտօնակից  
գործակալներուն վերապիտանումը: Այդ պահէն  
ետք ժապավենը կը ստանայ իրեն յատուկ դի-  
մագիծը, որ սակայն դժբախտաբար շատ դի-  
րին կանխատեսելի է, յատկապէս՝ ժապավենին  
առաջին բաժինը դիտողներուն համար: Ար-  
տերկրային էակներու միջեւ կոխներ, ոճիւր,  
առեւանգում, ժամացոյցի դէմ արշաւ. այս-  
պէս կարելի է խտացնել «ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ»ի երկ-  
րորդ բաժնին դէպքերը: Ժապավենին մէջ հա-  
նելի ներկայութիւն է դերասանուհի Ռոզարիո  
Տոսըն, որ իր ստանձնած Լորայի դերով կը վե-  
րապահէ ժապավենին մեծագոյն անակնկալը:  
Հաւանական է, որ դերասանուհիին այս խա-  
ղարկութիւնը անոր դիմաց բանալ աւելի կար-  
եւոր ժապավեններու մէջ դերեր ստանձնելու  
եւ շարժապատկերի այլ աստղի մը վերածուե-  
լու կարելիութիւնները:

Այս ժապավենին մէջ հետաքրքրական տի-  
պարներ են արտերկրային էակները, որոնց  
շարքին Սքրատ- Չարլի (ճոն Գիլի) նորավի-  
Սերիլինային երկու գուլիտով, բայց կէս ուղե-  
ղով օգնականը եւ ձիպը, որուն դերը ստանձ-  
նած է լիբանանցի դերասան Թոնի Շալիուպ:

«ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ»ի առաջին մասը դիտողները  
հաւանաբար գայն գտնեն նորութեան գուրկ,  
որովհետեւ այն բոլորը, որոնք նոր եւ իւրա-  
յատուկ կը նկատուին ժապավենին առաջին  
մասին մէջ. անոր երկրորդ բաժնին մէջ վե-  
րածուած են կրկնութեան եւ կէս ծանց տե-  
սարաններու: Ամէն պարագայի, այս ժապաւե-  
նին հրամցուցած քիչին մէջ է շատերու կողմ-  
մէ ժապավենի մը գոյութեան արգարացումը  
նկատուող հանելի ժամանցը:

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Շարժապատկերի լիբանանեան  
սրահներու կողմէ շատ հաւանաբար  
շահագործական նպատակներով ամբար-  
կարեւորագոյն ժապավենը նկատուող  
«Քրոստոս»ը եւ անոր մէջ դեր ստան-  
նած պատանիներու «Կուռք»ը՝ փոփ եր-  
գարուեստի աստղերէն Պրիթի Սփիրզ  
կը շարունակեն իրենց վրայ պահել հան-  
դիսանքներուն մեծ ուժգնութիւնը:  
Այս ժապավենին կողքին, ցուցադրուող  
նորութիւններու շարքին են «Լիպըթի  
սթէյնտը սթիլ», «Թեքսաս ուշնճրոգ» եւ  
«Պէնտիթ» ժապավենները:

«Լիպըթի սթէյնտը սթիլ» ժապաւե-  
նը կը ներկայացնէ  
ու իր անուան զուգումի  
պատմութիւն մը:  
Իր աղջկան մահ-  
ւան վրէժը լուծել  
ուզող ձօ կ'առե-  
ւանդէ Լիպըթի  
զէնքերու ընկերու-  
թեան մը ժառան-  
գորդուհին: Ժա-  
պավենին մեծ մասը  
կ'անցնի զէնքի եւ  
մահուան սպառ-  
նալիքի մթնոլոր-  
տին մէջ: Քէյի  
Սթիլին թեմադրած այս ժապավենին  
մէջ դերեր ստանձնած են Լիւստա Ֆի-  
րենթինո եւ Ուեսլի Մնայփ:

Դարձեալ վրէժխնդրութեան նիւթով  
ժապավեն մըն է «Թեքսաս ուշնճրոգ»,  
ուր մահացող քառապոյ մը կ'որոշէ վրէժ  
լուծել իրեն վնաս հասցուցած յերուզակ-  
ներէն: Ան իր շուրջ կը համախմբէ երի-  
տասարդ ուժեր, որոնց կու տայ «Թեք-  
սաս ուշնճրոգ»ի պիտակներ եւ անոնք  
կը սկսին իրենց առաքելութեան: Ուես-  
թըրը ժապավեններու տեսակը վերա-  
կենդանացնող այս ժապավենը գուրկ է  
իւրայատկութեան եւ ուշագրաւ երե-  
ւոյթներէ: «Թեքսաս ուշնճրոգ»ի բե-  
մադրիչն է Սթիւ Մայնը, իսկ անոր մէջ  
դեր ստանձնած է Տիլը Մաք Տերմոթ:

Վիպական կատակերգական, ժապա-  
ւեն մըն է բեմադրիչ Պէրի Լեինընի  
«Պէնտիթ»ը, ուր, այլ դերասաններու  
կողքին, դերեր ստանձնած են Պրուս  
Ուիլիս, Պիլի Պոպ Թորնթըն եւ Քէյթ  
Պլանչէթ: Ձօ եւ Թեքի երկու աւարե-  
կիչ-ոճրագործներ  
են, որոնք օր մը  
իրենք գիրենք կը  
գտնեն իրենց  
կեանքը եւ գործը  
ներկայացնել ու-  
զող հետատեսիլի  
յայտագիրի մը  
մէջ: Ֆիլեշպէթ-  
րու միջոցով կը  
բակուի անոնց  
խորհրդաւոր  
կեանքին կծիկը,  
մինչեւ որ կին մը  
մուտք կը գործէ



Պրուս Ուիլիս եւ Պիլի Պոպ  
Թորնթըն՝ «Պէնտիթ»ի մէջ

հոն: Նշենք, որ «Արմիկանոն»ի տեք-  
ուաջին անգամն է, որ Պրուս Ուիլիս  
եւ Պիլի Պոպ Թորնթըն միասին դեր կը  
ստանձնեն:

Այս օրերուն սրահներուն մէջ ցու-  
ցադրուող յատկանշական ժապավեն-  
ներէն նշենք «Հայ քրոյմը», «Փէնիթ  
ուում», «Այ հմ Սէմ» եւ «Պըրթոյ  
կըր»:

## ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

- «ՄԵՆ ԻՆ ՊԼԷՔ - 2»
- «ՊԵՆՏԻՏ»
- «ԼԻՊԵՐԹԻ ՍԹԵՆՏ ՍԹԻԼ»
- «ԹԵՍՍԱ ՌԵՅՆՃՐՈՂ»
- «ԶՐՈՍՐՈՏ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեք, Սեթ Էլի, Սքալլէ 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի, Սքարլէթ)
- «ԶԱԹՈՒԷՅ» (Փլանք / Ապրած, Չուք, Զոնքորտ)
- «ՇԱՅ ԶՐԱՅԱ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեք, Սեթ Էլի, Սոտեք, Կալաքսի, Սքալլէ 2001, Լաւ Սալիմաս)
- «ՊԼԷՆ ԱՅՅ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սեթ Էլի, Սոտեք, Կալաքսի, Սքալլէ 2001, Լաւ Սալիմաս)
- «ԵՆԹԻԹՐԱՍԹ» (Փլանք / Ապրած, Զոնքորտ, Ֆրիուէյ, Թրիփոլի, Չուք)
- «ՓԵՆԻԹ ՈՒՄ» (Եսփաս, Ամփիր / Սոտեք, Կալաքսի, Սքալլէ 2001, Սքարլէթ)
- «ԼՆԱԿԼԷՔ Ե ԼԸ ՏԻԷ» (Ամպաստ)
- «ՍԻՆ ՍԸՆԻՆ» (Փլանք / Փլազա)

- «ԱՅ ԵՍ ՍԵՍ» (Փլանք / Փլազա)
- «ՆԵԹ ՌԵՅԱ» (Ամպաստ)
- «ՍՓԱՅՏՐ - ՄԵՆ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեք, Կալաքսի, Լաւ Սալիմաս, Սքալլէ 2001)
- «ԶՕԹԱՅԱ» (Փլանք / Ապրած, Չուք, Զոնքորտ, Ֆրիուէյ, Փլազա)
- «ՏԸ ԶԱՌՆԸ ԱՅ ՍՈՒԹ ԵՐԻՍԹ» (Սքալլէ 2001)
- «ԱՍԹԵՐԻԷՍ Ե ՕՊԵԼԻԷՍ - ՍԻՍԻՈՆ ԵԼԵՈՓԱԹՐ» (Ֆրիուէյ, Ամպաստ)
- «ՊԵՐՏԵՅ ՎԸՐԼ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեք, Սեթ Էլի, Սքալլէ 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- «ՏԸ ՍԵՐՓԻԸՆ ԵՆԻԿ» (Ամփիր / ԱՖիլ, Փլանք / Ապրած, Չուք, Զոնքորտ, Ֆրիուէյ)
- «ԷՕ ԲԻԸ Օ ՓԱՐԱՍԻ» (Ամպաստ, Զոնքորտ)
- «ԾԻՍԻ ՆԻԹՐՈՆ. ՊՅՅ ՃԻՆԸՍ» (Փլանք / Չուք, Ապրած, Թրիփոլի, Զոնքորտ, Ֆրիուէյ)

●●●●● Գերազանց ●●●●● Չատ լաւ ●●●●● Լաւ ●●●●● Սիրակ ●●●●● Զոնք յանձնարարելի □ Զոնք դիտած

ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԻՆ ԼԵՆԱՋԱՆՅԻՆ ԹԻԻԵՐԸ  
Եսփաս. - 09/22516 - Սոտեք. - 01/616707 - Տիւն. - 01/792123 - Սոֆիլ. - 01/328806 - Զոնքորտ. - 01/738439 - Ամպաստ. - 09/226010 - Ֆրիուէյ. - 01/485590 - Ապրած. - 01/292192 - Քալիք. - 09/912503 - Չուք. - 09/221363 - Սքարլէթ. - 08/813901 - Սեթ Էլի. - 04/443992:

**Balkan Holidays**  
TRANSLITEX TOURS  
ԴԵՊՈ ԿԱՌԱՆԱ ՇՐՋԱՊԱՏՆԵՐՈՒ  
36 ՏԱՐՈՒՍԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

*Varna Summer*

2եր քուրսները կատարուող մեր սեփական օդանավերով նուազագոյն ամիսը 295 \$ էն սկսեալ (ներառեալ շրջապոյտին հիմնական ծախսերը)

**Balkan Holidays**  
VARNA EXPERT No.1  
Look after No. 1. Let No. 1 Look after you.  
CORNICH MAZRAA WAKF ROUM CENTER - BANK AUDI  
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

«ԱՉԴԱԿ»Ի ՄԵՋ  
ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազ-  
դակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել,  
պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցում-  
ներու բաժանմունք հասցնեն հրատարակման  
թուականէն առնուազմ օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ  
ԵՐԵԿԱՅԵԱՆ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են:  
Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր,  
այնքան ատեն որ գայն հրատարակելու  
հնարաւորութիւն կայ:

# Հուսանկարչութեան Պատմութիւնը

## ՄԵԾԵՐՈՒՆ ԵՒ ԼԱՒԵՐՈՒՆ ԴԻՄԱՆԿԱՐԻՉԸ

«ՏԻ ԻՆՏԻՓՅԵՆՏՆԵՆԹ»-Ի ՄԱՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԵԴՐՈՆԱՆԱՅ ԵՈՒՄՈՒՖ ԶԱՐԾԻ ԳԱՂԹԱԿԱՆԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԴԻՏԱՆԿԻՒՆԻՆ ԿՐԱՅ

Քանատահայ աշխարհահռչակ լուսանկարիչ Եուսուֆ Քարչ մահացաւ Յուլիս 13ին, Պոսթընի մէջ, 93 տարեկանին: Արեւմտեան մամուլին մէջ լոյս տեսան մահագրութիւններ, որոնք դրուատեցին անոր 50 տարուան լուսանկարչական բեղուն ապարտը: Քանատական օրաթերթեր, ինչպէս՝ «Տի Օթաուա Սիթիքըն», «Թորոնթօ Սթար», «Տը Կլոպ Էնտ Մէյ», «Տը Զենտիդը Փրէս» եւ «Քալկըրի Երթըլտ» կեդրոնացեալ անոր կերտած քանատացիի յաջողութեան վրայ (այն միակ քանատացին է եւ միակ լուսանկարիչը, որ «Շուօ Շու»-ի հրատարակչներուն կողմէ ընտրուեցաւ իբրեւ 20րդ դարու ամենէն հռչակավոր 100 անձնաւորութիւններէն մէկը): Բրիտանական օրաթերթեր, ինչպէս՝ «Տը Տէյլի Թեյէկրաֆ», «Տը Կարտիքըն» եւ «Տի Ինտիփենտընթ» գրեցին Քարչի լուսանկարչական աւանդին եւ Բրիտանիոյ ակադեմիոյ անձնաւորութիւններուն հետ անոր կապին մասին: Ծաւալուն յօդուածներ լոյս տեսան նաեւ «Տը Նիւ Եորք Թայմզ», «Տը Ուաշինգտօն Փոսթ», «Նիւ Յիւրոն Երթըլտ», «Տի Էքսպրէս» եւ հոլանտական «Կանտըլապատ» թերթերուն մէջ: Քարչի գրեթէ բոլոր մահագրութիւններուն մէջ ուշագրաւ երեւոյթը ան է, որ յօդուածագիրները ոչ միայն ճշուններ կատարած են անոր հայկական ծագումին վերաբերեալ, այլ նաեւ յատուկ կարեւորութեամբ անդրադարձած են թրքական հալածանքներէն եւ սպանութիւններէն խոյս տուած անոր ընտանիքի պատմութեան: Ստորեւ՝ «Տի Ինտիփենտընթ» թերթին մէջ լոյս տեսած մահագրութեան թարգմանութիւնը, ինչպէս նաեւ՝ Ուիլյամսըն Զըրչիլի հետ Քարչի համերկումին համադրական մէկ վերադարձութիւնը:

«Նոր աշխարհ հասնելէս ետք առաջին տպաւորութիւնս պողպատի նման ցուրտ ու արեւոտ ձմեռն օր մը Հալիֆաքսի ձիւնով ծածկուած քարափն էր: Չէի կրնար երեսակայել այն անսահման խոստումը, որ ինծի պիտի տար այս երկիրը: Այդ պահուն կը բաւէր, որ ապառ յայտնուէր»:

Եուսուֆ Քարչ, որ հռչակաւոր պիտի դառնար իբրեւ աշխարհի ամենէն ականաւոր դիմանկարիչը, մինչեւ իր կեանքին վերջին օրը յիշեց 1924ի Նոր տարուան գիշերը: 16 տարեկան հայ գաղթականը, հետու իր ընտանիքէն եւ բարեկամներէն, նոր աւարտած էր 29 օրուան ճամբորդութիւնը դէպի Քանատա: Անմոռանալի ժամանակ մըն էր օտար երկրի մը մէջ:

Քարչ իր ձեռքին մէջ սեղմած էր լուսանկարչական իր «օրեդրօր» նաքաշի, որ հոգացած էր դէպի Քանատա գաղթականի իր ուղեւորութեան ծախսերը: Ան նաեւ իջաւ դէմ յանդիման գալու համար Հիւսիսային Ամերիկայի ծաւալապաշտութեան օրերու խարուսիկ զգացողութիւններուն հետ:

«Նաւամատուցէն կայարան ուղղուեցանք թաքսիով, որուն նմանը չէի տեսած: Սահակ թաքսի մըն էր, զոր կը քաշէին ձիերը. անոնց սանձերէն կախուած գանգակները անդադրող կը հնչէին, իսկ քաղաքին գանգերը ուրախութեամբ կը ղողանջէին նշուելու համար Նոր տարին: Վաճառատուներու եւ տուներու ապակիներուն փողփողունը զարդերը, ինդացող բազմութիւնները աներեսակայելի երազ մը կ'իրականացնէին ինծի համար», գրած է Քարչ:

Բազմաթիւ հայերու նման, Քարչի ընտանիքը եւս կրած էր իր ժողովուրդին վրայ թրքական ճնշումներուն ծանր տառապանքները: Տարիներ ետք Քարչ ըսած է. «Անգուլթ եւ չարանգի հալածանքը մաս կը կազմէ իմ կանուկ յիշողութիւններուս»: Անոր երկու հօրեղբայրները սպաննուած են եւ քոյրերէն մէկը մահացած է ժանտաղբի մէջ: Ընտանիքը 1922ին խոյս տուած է դէպի Սուրիա: Եուսուֆի հայրը զայն աղքատութենէն եւ քաղաքակաւնութենէն հեռու պահելու նպատակով «ձեռով մը միջոցը գտած էր զիս ուղարկելու հօրեղբորս» նաքաշի քով, դէպի ցամաքամաս մը, որ այդ ժամանակ ինծի համար անծանօթ տարածութիւն մըն էր դպրոցականի քարտէսիս վրայ», գրած է Քարչ:

Նաքաշ լուսանկարիչ էր եւ իր լուսանկարչատունը ունէր Երզրուքի մէջ (Մոնրէալ): Եուսուֆ 17 տարեկանին սկսած է սորվիլ իր հօրեղբոր արհեստը: Ան շուտով սկսած է անհոնօրէն սիրել զայն:

«Լուսանկարչական արուեստին հետ առընչուող ամէն ինչ կը գրաւէր հետաքրքրութիւնս ու խանդավառութիւնս: Երաթափակներուն ու փառէի Երբպոնքի շքեղութիւնը մը կը թաւալուէր իմ սիրտիս վրայ: Ես կը տպէի նկարները եւ գանոնք ցոյց կու տայի հօրեղբորս անոր քննադատութիւնները լսելու համար: Վստահ եմ, որ այդ նկարները որբելէ արժէք չունէին, սակայն շատ բան կը սորվէի», կը գրէ ան:

Հաւանաբար գիտակցելով, թէ Քանատայի մէկ փոքր գիւղաքաղաքը շատ երկրորդական

վայր մըն էր իր եղբորորդիին նորափթիթ տաղանդը զարգացնելու համար, նաքաշ 1928ին զայն իբրեւ աշակերտ ուղարկած է ձան կարոյի արդիական եւ նորարարութիւններով հարուստ լուսանկարչատունը, Պոսթընի մէջ: Այստեղ, ինչպէս նաեւ Պոսթընի հանրային գրադարանին մէջ, Քարչ սորված է «լուսաւորումի, ձեւագծումի եւ յօրինուածքի մասին» եւ սկսած է «զգալ լուսանկարչութեան աւելի լայն տարողութեան պարզեւած հաճոյքը», ինչպէս կը նկարագրէ ան:

Կարօ զարգացած եւ խելացի մարդ մըն էր: Անոր լուսանկարչատունը արուեստագէտներու հանդիպման վայր էր: Կարոյի յետմիջօրէի հիւրասրահները այցելող տղամարդիկն ու կիները կը հմայէին Քարչը, որ կը հիւրասիրէր խմիչքները, որոնք լուսանկարչատուն կը հասնէին ներքի տուփերու մէջ, անոնց գործածութեան դէմ սահմանուած արգելքին ամէնէն խիստ կիրարկումի ժամանակներուն: Ան կը հետեւէր խօսակցութիւններուն, բանրասանքներուն եւ վէճերուն:

«Նոյնիսկ փոքր տարիքիս, - գրած է ան տարիներ ետք, - կը գիտակցէի, թէ Կարոյի հիւրասրահին մէջ փառահեղ յետմիջօրէիներն ու երեկոները իմ համալսարանս էին: Հոն արթնցաւ աշխարհի վրայ իրենց դրոշմը ձգող տղամարդիկն ու կիները լուսանկարելու փափակը»:

Քարչ Կարոյի լուսանկարչատունէն Քանատա վերադարձաւ 1931ին եւ իր սեփական դիմանկարներու լուսանկարչատունը հիմնեց Օթաուայի մէջ: Ան կը յուսար, որ Քանատայի մայրաքաղաքին մէջ առիթով պիտի ունենար «լուսանկարելու երկրին ականաւոր դէմքերն ու միջազգային ճանաչում վայելող բազմաթիւ օտար այցելուները», ինչպէս գրած է ան: Քարչի առաջին լուսանկարչատունը հիմնուած էր նիւթակն անձուկ պայմաններու մէջ:

«Կահոյքը առաւելաբար կը բաղկանար նորինջի սնտուկներէ, որոնք ճաշկով (ինչպէս կը կարծէի) ծածկուած էին կրօնաւորներու տարագով: Երբ նոյնիսկ կը ստիպուէի փոխ առնել քարտուղարս ՆԼ տղարի շարժականը, լուսանկարչատան վարձքը վճարելու համար, երիտասարդութեան ընձեռած տոկոսն ու թեմա՞ր տակուան համոզուած էի, թէ ճիշդ ընտրութիւն մը կատարած էի», գրած է ան:

Քարչի ինքնավստահութիւնը, տաղանդն ու խանդավառութիւնը, ինչպէս նաեւ առեւտուրի սուր զգացողութիւնն ու ընկերային ճիշդ կապերը հաստատուելու կարողութիւնը կ'երաշխատէին, թէ այս օթաուայի շուտով պիտի դառնար արեւմտեան աշխարհի ամէնէն հռչակաւոր դիմանկարիչներէն մէկը:

Լուսանկարչատունը հիմնելէն կարճ ատեն մը ետք Քարչ նոր եւ արդիւնաւէտ կապեր հաստատած է Օթաուայի մէջ: Առաջինը՝ «Սեթըրտէյ Նայթ» պարբերաթերթի խմբագիր Պ. Ք. Սենտուէլի հետ, եւ երկրորդը՝ Քանատայի ընդհանուր կառավարիչին՝ զաւկին՝ Լորտ Տանքընընի: Ան սկսած է նաեւ լուսանկարչական արձանագրութիւնը պահել Օթաուայի «Լիթըլ Թիէթըր»-ին մէջ ներկայացուող բեմադրութիւններուն եւ սորված է լուսանկարչութեան մէջ օգտագործել արուեստական լոյսը: «Արտայայտութեան այս ձեւը, կեանքը վերլուծելու այս միջոցը մեծ հաճոյք կը պարգեւէր ինծի: Նոր աշխարհ մը կը բացուէր դիմացս», գրած է ան: «Լիթըլ Թիէթըր»-ի մէջ Քարչ նաեւ հանդիպած է իր ապագայ կնոջ՝ Սոլանթ Կոթիէի: Կատարելապաշտ եւ զարգացած կին մը, որ առաջին հարգողութիւնը գործած է Քարչի ստեղծագործական կեանքին մէջ:

Քարչ 1930ական տարիներու կէսերուն ճանչցուած դէմք մըն էր դիւանագիտական եւ պետական շրջանակներու մէջ: Ան յաճախ կը կանչուէր քանատացի եւ Քանատա այցելող պետական ներկայացուցիչներ լուսանկարելու համար: Սկսած էր զարգացնել ոճ մը, որ միաժամանակ լուրջ էր եւ փառահեղ. ան չէր փորձեր պատկերել միջազգային ղեկավարներու սկարպետութիւնները, այլ կը ձգտէր շեշտել անոնց կարողութիւններն ու զօրութիւնը: Քարչ բուռն հետաքրքրութիւն մը ունէր իր լուսանկարած անձերուն նկատմամբ եւ կ'ուսումնասիրէր անոնց կեանքն ու ասպարէզը՝ նախքան գանոնք լուսանկարելու:

«Լուսանկարելէ առաջ ամէն ճիշդ կը թափեմ լաւագոյն ձեւով ճանչնալու համար անձը եւ ընդհանուր առումով կը պատկերացնեմ, թէ ինչ պէտք է յուսալ ու գտնել, եւ թէ՛ ինչ կը յուսամ արտացոյլել յարդ կերպով: Եթէ կարենամ լուսանկարին մէջ պատկերել այն արժանիքները, որոնք զիս կը ներգրաւեն դէպի այն անձը, որ պիտի լուսանկարեմ, եւ այն արժանիքները, որոնք գոհունակութիւն պիտի պատճառեն ինծի, ապա լուսանկարը շատ հաւանաբար պիտի գոհացնէ նաեւ զայն տեսնողը»:

## ՉԸՐՉԻԼԻ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

ԵՈՒՄՈՒՖ ԶԱՐԾԻ ԵՒ ՈՒՆՍԹԸՆ ԶԸՐՉԻԼԻ ԸՆԴԳԻՊՈՒՄԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՄԵՆԵՆ ՅԻՃԱՍԱԿԵԼԻ ԴՐՈՒԱԳՆԵՐԵՆ ՄԵԿՆ Է

Քենեթի, Քասթրօ, Այնթապ, Չըրչիլ, Մանտելա, Հեմինկուէյ, Եվայթցըր, Նորուէյ, նախագահներ, վարչապետներ, թագաւորներ, թագուհիներ, գիտնականներ, բժիշկներ, գրագէտներ, երաժիշտներ, արուեստագէտներ... Քարչի լուսանկարած աշխարհահռչակ անձերուն ցանկը երկար է: Պետութիւններ Քարչի լուսանկարները կ'օգտագործէին իրենց դրոշմաթուղթերուն վրայ: Սակայն Քարչի անուր մամլոյն ակնարկը ակնառիչ էր: Բրիտանիոյ նախկին վարչապետ Ուինսթըն Չըրչիլի հետ:

Լուսանկարներու պատմութեան եւ Քանատայի Արուեստի Ազգային պատկերասրահին լուսանկարներու բաժանմունքին նախկին պատասխանատուն՝ Ճէյմզ Պրոքթըման, որ Քարչը կը դասէ 20րդ դարու լաւագոյն լուսանկարիչներուն շարքին, կ'ըսէ, թէ ոչ մէկ դիմանկարիչ յաջողած է մէկ նկարով գրաւել աշխարհին ուշադրութիւնը, ինչպէս Քարչ՝ Ուինսթըն Չըրչիլի իր դիմանկարով:

«Նոյնիսկ եթէ ամէնչն մեծ լուսանկարիչը իր ոսպնեակը կեդրոնացնէր Չըրչիլի վրայ, արդիւնքը համագոր պիտի չըլլար Քարչի լուսանկարին, իր ամբողջ ուժգնութեամբ եւ ուզումնակութեամբ», կ'ըսէ ան:

Քարչ 30 Դեկտեմբեր 1941ին ամէնէն հռչակաւոր հանդիպումներէն մէկը ունեցած է լուսանկարչութեան պատմութեան մէջ:

Բրիտանիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլը քանատական խորհրդարանին դիմաց իր խօսքը արտասանած էր եւ Քարչ ինծի էր լուսանկարելու համար 20րդ դարու անծագուն ղեկավարներէն մէկը:

«Լուսանկարելու տրամադրութիւն չունէր եւ միայն երկու վայրկեան տուաւ ինծի, խորհրդարանի ժողովուրդին սենեակ մը ուղղուելով, - գրած է Քարչ իր 10րդ գիրքին՝ «Ֆէյսըզ աֆ աուր քայմ»-ի մէջ (ան հեղինակն է լուսանկարչական 15 գիրքերու): Երկու ժլատ վայրկեաններ, երբ պէտք էր լուսանկարելի մարդ մը, որ արդէն գրած էր կամ



Քարչ յատուկ համակարգը ունէր Էլիզապէթ թագուհիին նկատմամբ

կան զուարթ արջը: Քարչի լուսանկարները այնքան չէին արտացոլեր անոր լուսանկարած տղամարդոց եւ կիներուն ոգին, որքան՝ անոնց դիրքին խորհրդանշական ընդթը, այլ խօսքով՝ հանրային անձնաւորութիւնը:

Թէեւ Քարչ 1950ական տարիներու սկիզբը կարճ ժամանակ մը աշխատած է իբրեւ ճարտարարուեստի լուսանկարիչ «Աթլաս Սթիլ» ընկերութեան համար, սակայն անոր կողմէր դիմանկարչութիւնն էր, կոթող մը բարձրացնելու համար մեծերուն, լաւերուն եւ հմայիչներուն համար: Բրիտանիոյ թագաւորական ընտանիքէն մինչեւ Նորմըն Մէյլըր, 14 տարեկան էլիզապէթ թէյլըրէն մինչեւ ծերունաբարդ Ալլըրթ Այնթապ, հռչակը գանոնք միացնող հասարակաց յատկանիշն էր:

Մեր ժամանակներու արդի դիտանկարներ Քարչի լուսանկարները կրնան պարզամիտ, վերամբարձ, նոյնիսկ կեղծ թուիլ: Կը թուի, թէ ան իրական մարդոց դիմանկարները պատկերելու փոխարէն՝ տիպարներ կը ստեղծէ թատերական լուսաւորումով եւ վերածեւաւորումով: Սակայն Քարչ երբեք հարցազանի տակ չէ առած հռչակը կամ բարձր իրերը (թէ՛ն ան յատկանշական կերպով Ռիչըրտ Նիքսոնի լուսանկարը դուրս ձգած է 1983ին հրատարակուած ամերիկացի նախագահներու լուսանկարները պարունակող իր կենսագրական գիրքէն): Ան քննադատական ոչինչ ունէր ըսելիք:

Շար.՝ էջ 10



Քարչ՝ իր կեանքին վերջին տարիներուն: Խորքին՝ Չըրչիլի դիմանկարը

գումն էր, սակայն՝ աւելի իմաստուն, աւելի փորձառու եւ անմահ», ըսած է Քարչ:

Չըրչիլի լուսանկարը ոչ միայն անոր ամէնէն աւելի վերաբրտագրուած դիմանկարը եղաւ, այլ նաեւ բազմաթիւ երկիրներ, ինչպէս՝ Քանատա, Բրիտանիա, Աւստրալիա, Նոր Զելանտա եւ Միացեալ Նահանգներ զայն հրատարակեցին յիշատակի դրոշմաթուղթերու վրայ:

Քարչի լուսանկարչական գործիքին ոսպնեակը, զոր ան գործածած էր Չըրչիլը եւ ականաւոր այլ անձեր լուսանկարելու համար, այժմ կը ցուցադրուի Օթաուայի Գիտութեան եւ Արհեստագիտութեան Ազգային թանգարանին մէջ:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

# Vivacite

Newly Opened

## ՍԱՐՁՈՒՄԻ ԵՒ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

ժրտէյտի բաղաբապտարանին մօտ, Մաքտոնալտոնի դիմաց, Սենթր «Եարա»

Բ. յարկ: Հեռ. (03) 587077:

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուօի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն են:

Սուրիական քոթոնի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3996,00 - 4000,00	լ.ն.
Քուէյթեան տինար	4953,42 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,42 - 2128,42	լ.ն.
Ա.Մ. Էմիրատեան տինար	408,43 - 412,42	լ.ն.
Սէուտական ռիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քարաքան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կիւնէ	323,72 - 325,72	լ.ն.
Անգլիական սթըրլին	2359,70 - 2363,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1033,35 - 1037,52	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2631,85 - 2634,17	լ.ն.
Ճափոնական հապար եէն	977,40 - 981,85	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	844,85 - 848,70	լ.ն.
Աւստրալիական տոլար	844,85 - 848,70	լ.ն.
Եւրօ	1515,95 - 1519,16	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մէքսիկական փէսսո	569,500 - 589,500	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	15,000,000 - 15,500,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	315,68 - 319,72	Տ
Մէկ օսն արծաթ	4,96 - 4,98	Տ

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.0051
Քանադական տոլար	1.5416
Չուիցերիական ֆրանք	1.456
Ճափոնական եէն	117.06
Մէկ սթըրլին	1.5637

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՄՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ԵՂՈՒՄ ԳԻՆԻ Բ. ԵՂՈՒՄ

Ա. կարգի	4 18	4 1/8
Բ. կարգի	4 4/8	4 4/8

բաժնետիրը

### ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5199

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՎԱՅԵԱՏ
1. 2001ի ախարհի լաւագոյն ֆուտբոլիստը՝ Լուի Ֆիգուերա:	1. Կողպատ - Դեպպալ:
2. Արական անուն - Սարգսիս:	2. Զեռնաձագ - Ստաքալան անկան:
3. Այբուբենէն - Բլուր:	3. Դրկից տառեր - Վայրի արու ոչխար - Հատակից:
4. Մուկերու թակարդ - Անձնական դերանուն:	4. Կրկնուած ձայնաւորներ - Սուզակէտ - Տեղափոխուած գիրք:
5. Ժանկաւոր ծայրով սանդ - Հորովակերտ մասնիկ:	5. Զիլիի աստղը Ֆրանսայի Մոնտիալի - Վահան (Հակ.):
6. Դաշտ - Հին Հայերէն (Հակ.):	6. Խաչակիր կայսր՝ Շիկամօրուս - Աղբիւր:
7. Կրկնուած բաղաձայններ - Հերիք - Անձուկ:	7. Արական օտար անուն:
8. Ռաֆայէլ Պատկանեանի քերթուածներէն՝ «... Արտասուրը»:	8. Քրիստոս Հոն Զուրը գինիի վերածեց - Թափթփած (Հակ.):
9. Ստինք - Ողբակիականներու բնօրրանը:	9. Յետոյի խմբապետ Փոլիկի մականունը:
10. Կրցածիւն չափ - Ցուցական անկան:	10. Ժամանում - Վերնատուն:
11. Տոպրակ - Ազատէ՛:	11. Գինդ - Գիշակեր թռչուն - Օծէ՛:

### ԹԻՒ 5198

### ԽԱՉԲԱՌԻՆ

### ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Կ	Ո	Չ	Ն	Ա	Ս	Կ	Լ	Ա
2	Ո	Ի	Տ	Ն	Ս	Ս	Ա	Ս	Ա
3	Ս	Յ	Ն	Ղ	Ո	Ք	Մ	Ի	Տ
4	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Օ	Ն	Ի	Մ	Ս	Ի	Ի	Ի	Ի
6	Դ	Ս	Ս	Ս	Գ	Ի	Ր	Ս	Ս
7	Ա	Լ	Ի	Ձ	Ա	Ա	Ս	Ս	Ս
8	Ղ	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Է	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

### ՓՐՈՑ. Վ. ՏԱՏՐԵԱՆ...

Շարունակուած՝ 5րդ էջէն

սկսած են լրջօրէն մտածել Հայ ժողովուրդը ընալընջելու մասին, մանաւանդ նկատի առած, որ Հայ դեկաւարներ որոշած են վերակենդանացնել Հայկական բարենորոգումներու հարցը եւ պատուիրակութիւն մը կազմած են՝ իրենց ձայնը Եւրոպա հասցնելու համար:

Տատրեան մանրամասնօրէն խօսած է Յեղասպանութիւնը կազմակերպող իթիհատակներու, Թաւաթ փաշայի ներքին գործոց նախարարութեան, ինչպէս նաեւ Յեղասպանութիւնը գործող յատուկ խումբերուն մասին:

Իր դասախօսութեան վերջին բաժնով Տատրեան բացատրած է, թէ անպատիժ մնալու երեւոյթն է, որ առիթ տուած է Յեղասպանութեան ծրագրումին ու գործադրութեան: Ան դիտել տուած է, որ Առաջին Աշխարհամարտէն առաջ իսկ տարիներ շարունակ Հայ ժողովուրդը կ'ենթարկուէր Հայաձանքներու եւ ջարդերու, որոնց կազմակերպողները կը մնային անպատիժ: Տատրեան իր ելոյթը եզրափակած է՝ ըսելով, թէ Հայկական Յեղասպանութիւնը Հետեւանք էր նախապէս անպատիժ մնացած ջարդերուն եւ աւելցուցած է, թէ Հայկական Յեղասպանութեան անպատիժ մնալը ինքնին բաղաձայն էր Հանդիսացած է 20րդ դարու ընթացքին այլ ջեղասպանութիւններու գործադրութեան: Դասախօսութեան յաջորդած է զրոյցի բաժին մը, որուն ընթացքին ուսանողները Հիմնականօրէն կեդրոնացած են Յեղասպանութեան ժխտումին եւ Տատրեանի ջեղասպանութեան հասկացողութեան վրայ:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԷԼԻԶ ՄԱՆՍԵՐԵՃԵԱՆԻ մահուան Գ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2002, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐԲԱՆԱՍ ՊԵՃԵՐԵՃԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2002, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱՐՈՒԹ ՊԱՔԱՆԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2002, Նոր Մտանայի Ս. Աստուծածծին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԱՒԷՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2002, Նոր Մարաշի Սրբոց Զանաւոր Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՅՐՈՒԹ ՀԱԼԷՊ ՅՈՒՍԵՓ ՅԱԿՈՒԲ ԱԾՃԵԱՆԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 2002, Ժուզիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի, իսկ Կիրակի, 28 Յուլիս 2002, Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ (Մէլտան) յաւարտ Ս. պատարագի:

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)

Շարունակեցէք սեղմել ձեր քսակը՝ առանց վնասելու ձեր պիտեղիք: Խնայողութեան օգուտը մեծ պիտի ըլլայ: Առածը կ'ըսէ. «Ճերմակ լուծման սեւ օրուան համար պահէ»...

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ձեր նիւթական կարողութիւնը երբեմն խնդրոյ առարկայ կը դառնայ բարեկամներու կամ քիչ մը հասարակ մարդոց կողմէ: Այդպիսիներուն կարելիութիւն մի տաք:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Աշխատանքի մէջ մթնոլորտը լարուած է. շնորհիւ ձեր բարեացակամ կեցուածքին՝ պիտի կարենաք մեղմացնել կողմերուն բարկութիւնը:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Հաւանաբար մէկը այսօր ձեզի արտայայտել իր սերը կամ վիպային ոգով նամակ մը գրէ. պատասխանեցէք անոր նոյն ձեւով, այսինքն՝ սիրով:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեր ընտանեկան յարիւն տակ պիտի ունենաք սիրալիր եւ գուրբ պահեր: Զանաքէք նոյն տրամադրութիւնը պահել միշտ: Օրը ունի նաեւ այլ բարիքներ:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Փոքր տեղափոխութիւն մը պատճառ պիտի ըլլայ փոխելու ձեր գաղափարը որոշ հարցի մը շուրջ: Հանելի երեւոյթներ անակնկալ կերպով պիտի ստեղծուին:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Այսօր պարտք վճարելու հաշուեցոյց մը պիտի ստանաք, բայց պիտի ուրախանաք, երբ տեսնէք, թէ հաշուեցոյցը նուազ հաշի կը ներկայացնէ:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ձեր անկեղծութեամբ եւ սիրալիր տրամադրութեամբ պիտի հմայէք ձեր շուրջիները, որոնք աւելի պիտի յարգեն ու գնահատեն ձեզ նիւթապէս եւ բարոյապէս:

☆ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Կոնակի, յօրերու եւ մկաններու ցաւեր ունեիք: Այսօր անձնապէս պիտի հաստատէք, որ կրցած էք դարմանել ձեր ցաւերը եւ աւելի լաւ կը բնանաք ներկայիս:

☆ **ԱՅՅԵՂԶԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Մտածեցէք պահպանել ձեր խոստումը եւ պարտականութիւնները, որովհետեւ ձեր շուրջը կան դժուարութեան մէջ գտնուող անձեր, որոնք կը սպասեն ձեր օգնութեան եւ մեծ յոյսեր կապած են ձեզի:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Եթէ անգործութեան մտնուած էք եւ երկար առեւտրի վեր գործ կը փնտռէք, մի՛ յուսահատիք: Մարդիկ պիտի մտածեն ձեր մասին: Լաւատես եղէք:

☆ **ԶՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Պիտի ստեղծուի արտասահման ճամբորդելու առիթ մը, որ ամեն տեսակետով նպաստաւոր պիտի ըլլայ: Ուրեմն անվախ պտտեցէք:


# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶՔՕՍԱՇՐՋՈՒԹԻՆ

## «ԵՐԿԻՐԸ ԵՐԿԻՐԷՆ ԴԻՏՈՒԱԾ»

### ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԸ՝ ՆԸԺՄԷԻ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

Լիբանանի մէջ տեղի ունենալիք ֆրանսախօս երկիրներու խորհրդարանի ներս, Երեւանի 16 Յուլիսին տեղի ունեցաւ բացումը «Երկիրը երկիրքէն դիտուած» ցուցահանդէսին, որ կը ներկայացնուի պարզ երկիրքի տակ՝ Նրժմէի հրապարակին եւ մերձակայ փողոցներուն մէջ: Միջազգային հռչակի տարրու եւ տազէ տեան Արթիւր Պերթրանտի գործերուն այս ցուցադրութիւնը կապմակերպուած է ֆրանսական «Լը Մոնտ» թերթին եւ «Սիւս» ընկերութեան կողմէ: Ցուցահանդէսը կը վայելէ Լիբանանի մշակոյթի նախարարութեան հովանաւորութիւնը:



Լիբանանի մէջ տեղի ունենալիք ֆրանսախօս երկիրներու խորհրդարանի ներս, Երեւանի 16 Յուլիսին տեղի ունեցաւ բացումը «Երկիրը երկիրքէն դիտուած» ցուցահանդէսին, որ կը ներկայացնուի պարզ երկիրքի տակ՝ Նրժմէի հրապարակին եւ մերձակայ փողոցներուն մէջ: Միջազգային հռչակի տարրու եւ տազէ տեան Արթիւր Պերթրանտի գործերուն այս ցուցադրութիւնը կապմակերպուած է ֆրանսական «Լը Մոնտ» թերթին եւ «Սիւս» ընկերութեան կողմէ: Ցուցահանդէսը կը վայելէ Լիբանանի մշակոյթի նախարարութեան հովանաւորութիւնը:

Մինչեւ 20 Հոկտեմբեր շարունակուող այս ցուցահանդէսը կը ներկայացնէ լուսանկարներ, որոնք կը ներկայացնեն օրէն դիտուած: Այս ցուցահանդէսը ներկայացնուած է արժանացած է հանրութեան գնահատանքին: Լուսանկարները, որոնք կը յատկանշուին գեղեցկութեամբ եւ մեծ վարպետութեամբ, առանց բառերու կոչ կ'ուղչեն պահպանելու բնութեան գեղեցկութիւնը եւ երկիրը փրկելու բնութեան շարաշահումին պատճառով անոր սպառնալիքները:

Գեղարուեստը եւ կենսոլորտի պահպանման դաստիարակութիւնը համարող այս ցուցահանդէսը աշխարհի տարածքին ցարդ ունեցած է 12 միլիոն այցելու:

### ՀԵՌԱՏԵՍԻԼ

- 10:30 - Եւրոնիւզ
- 14:30 - Լուրեր
- 15:00 - Մըշուար
- 17:00 - Պէս սելլըր
- 18:00 - Շըրլի Հոլմս
- 18:30 - Արաբական ֆիլմաշար
- 19:30 - Արաբ լուրեր
- 20:00 - Տեղական ֆիլմաշար
- 22:00 - Տեղական ֆիլմաշար
- 23:00 - Ամերիկեան ֆիլմաշար
- ԷՄ. Թ. ՎԻ. 7:30 - Թելէ մաթէն
- 9:30 - Մինի սքիտիօ
- 10:30 - Քիէքի
- 11:00 - Ուսթընս
- 11:30 - Քըլ մէյլէյլ
- 12:00 - Էմ. Թ. Վ. սփորթ
- 12:30 - Էս. Էլ. Շի.
- 13:00 - Մարիա Սելեսթ
- 14:00 - ժուրնալ Յրանս 2
- 14:30 - Սի. Էն. Էնի լուրեր
- 15:15 - Աղանի աղանի
- 16:30 - Փրքմուն
- 17:00 - Մինի սքիտիօ
- 17:45 - @Էմ. Թ. Վի.
- 19:00 - Էնամորատա
- 20:00 - Արաբերէն լուրեր
- 20:30 - Ռաիէթ ալէթ
- 21:30 - Ամերիկեան ժապաւէն
- 22:30 - Պի. Պի. Սի. վաւերագրական
- 23:45 - Տիվերթիսըման
- ԷԼ. ՊԻ. ՍԻ. 7:00 - Սի. Էն. Էնի լուրեր
- 7:30 - Սի. Էն. Էն. Եւրո Հէյթ
- 08:25 - Մարիա իլլա Հայֆա
- 09:30 - Մոնտիալի մրցումներ
- 11:30 - Նահարթմ Սայիտ
- 12:00 - Էսմերալտա
- 15:00 - Լուրեր
- 15:15 - Քայալ էլ նաս
- 18:00 - Չառապա
- 19:00 - Մարիա Իլլապէլ
- 20:00 - Արաբերէն լուրեր
- 20:50 - Մարիա ունա
- 21:35 - Ես լէյլ էս այն
- 23:30 - Թելէօթթ
- 00:00 - Ամերիկեան ժապաւէն
- 13:00 - Յիլէ ինֆօ
- 13:05 - Նոթս լէնտինկ
- 14:00 - Անգլերէնով լուրեր
- 14:20 - Յրանսերէնով լուրեր
- 14:40 - Հայերէնով լուրեր
- 15:30 - Ա. Թ. Ս. Ալ. թենիսի մրցաշարք
- 16:30 - Թելէօթթիկ
- 17:00 - Էլլադար ըքպար
- 17:30 - Արաբական ֆիլմաշար
- 18:30 - Միւլիքանա
- 19:30 - Մոնտիալի յատուկ յայտագիր
- 20:00 - Արաբերէն լուրեր
- 20:30 - Ռուստամ Մորախարիրա
- 20:32 - Ման սաւարպահ մէյլիոն
- 21:30 - Ամերիկեան ժապաւէն՝ «Տենտեներն»
- ԷՆ. ՊԻ. ԷՆ. 15:00 - Լուրեր
- 16:00 - Մննա ու ֆինա
- 17:00 - Վաւերագրական
- 17:30 - Սինեմա / 35 mm
- 18:00 - Նոթմենք
- 18:15 - Թիֆլուս
- 19:00 - Լուրեր
- 20:00 - Մըն ալ սապահիա յայտագիր
- 22:00 - Մասայա
- 23:00 - Թախթը ալ էսում
- 23:30 - Մոնտիալի յատուկ յայտագիր
- ՆԻՈՒ ԹԻ. ՎԻ. 7:30 - Լուրեր
- 8:30 - Եոկա
- 09:00 - Սապահ էլ ուարտ
- 12:30 - Սէն Թրոֆէ
- 13:30 - Տեղական ֆիլմաշար
- 14:00 - Լուրեր
- 15:00 - Վաւերագրական
- 17:00 - Հիքայաթ Միա
- 18:00 - Մարիա Նուր
- 19:30 - Լուրեր
- 20:30 - Սէն Թրոֆէ
- 21:30 - Մարպական
- 23:30 - Տը լուս ֆայլ

- ՀԵՐԱՏԵՍԻ

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Կ Ի Ն



«ՉԷՍՓԻԸՆԸ ԼԻԿ»-Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔ

## ՓԻԻՆԻԿ ԵՐԵՒԱՆ ՏԱՊԱԼԵՑ ԹԱՄՓԵՐԷ ԵՈՒՆԱՅԹԸՏԸ՝ 4-0

«ՉԷՍՓԻԸՆԸ ԼԻԿ»-ի Կոուսի Ա. հանգրուանի երթին իր կատարած մրցումին, Հայաստանի ներկայացուցիչը՝ «Փիւնիկ» Երեւան շախմատային յաղթանակ մը արձանագրեց, 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելով Թամփերէ Եունայթըրը (Ֆինլանտա), Հելսինքիի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր երեք հազար համակիր:

Հայկական խումբը իր արձանագրած այս յաղթանակէն ետք շատ կարեւոր քայլ մը առաւ դէպի Կոուսի Ա. հանգրուան, նկատի ունենալով, որ դարձի մրցումը տեղի պիտի ունենայ Հայաստանի մէջ:

Թամփերէի դէմ տեղի ունեցած մրցումին, «Փիւնիկ»-ի չորս անպատասխան կոլերը նշանակեցին՝ Արմա Բարամեան (32րդ եւ 67րդ), Արտաւազ Բարամեան (48րդ) եւ Արթուր Մկրտչեան (72րդ):

### ՓԻՆԿ ՓՈՆԿ

## ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

«Միշէլ Մըր»-ի անուան համալիրին մէջ (Նահր Էլ Մոթ) տեղի ունեցող փինկ փոնկի Լիբանանի բաժակի մրցաշարքին, երէկ Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներէն Ալֆրէտ - Նաժմ Սարգիսեան 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Մոհամէտ Հապաշէն (Ռիատի):

Վաղը՝ Շաբաթ, ժամը 3:00էն սկսեալ տեղի կ'ունենան այլ մրցումներ, նոյն վայրին մէջ:

Տղոց մրցումներուն, Ռապիկ Շեմեմեան կը ճակատի մրցի Բալաշի (Սիւի Սալտա) եւ Հանի Բալաշի (Ռիատի) դէմ: Յաղթանակ արձանագրելու պարագային, Ռապիկ յաջորդ հանգրուանին իր դէմ պիտի ունենայ Ալֆրէտը:

Նշենք, որ թէեւ Ռապիկ եւ Ալֆրէտ կրած են մէկական պարտութիւն, սակայն մրցաշարքին դուրս մնացած չեն:

## ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏ - ՊՈՔԱ ԺՈՒՆԻՈՐԶ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Անգլիոյ բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 2002-2003 եղանակին նախօրեակին (որ կը սկսի Օգոստոս 17ին), Մանչեսթըր Եունայթըտ որոշած է «Օլտ Թրէֆորտ»-ի մէջ «Չէրիթի» մրցում մը կատարել, Պոքա ժունիորսի դէմ (Արժանիքին):

Մանչեսթըր Եունայթըտի մարզիչ Ալեքս Ֆերկըսը կ'ըսէ. «Պոքայի դէմ տեղի ունենալիք այս մրցումը (Օգոստոս 10ին) թէեւ բարեկամական է, սակայն այդ մրցումէն գոյացած գումարը ամբողջութեամբ պիտի տրամադրուի ԵՈՒՆԻՍԷՖ-ին: Մեր համակիրներուն օգնութեամբ պիտի փորձենք կոկիկ գումար մը հաւաքել՝ բարի նպատակի մը համար: Մրցումը մեզի համար պիտի ըլլայ շատ լուրջ, որովհետեւ մեր մրցակիցը բաւական դժուար խումբ մըն է վստահաբար»:

Նշենք, թէ վերջին երեք տարիներուն, Մանչեսթըր Եունայթըտ այս նպատակով մրցում կը կատարէ եւ հաւաքուած գումարը ամբողջութեամբ կը տրամադրէ ԵՈՒՆԻՍԷՖ-ին:

### ԹԵՆԻՍ

## ԱԿԱՍԻ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

Ամերիկացի թենիսիստ Անտոն Կլասի առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը բերել մեր մրցաշարքին, որուն արդէն իսկ կը մասնակցին մեծ մարզիկները, կ'ըսէ մրցաշարքի պատասխանատուներէն Քիթիլ Փեթրով:


«Շատ ուրախ ենք, որ Անտոն Կլասի նման մեծ մարզիկ մը կ'ուզէ իր մասնակցութիւնը բերել մեր մրցաշարքին, որուն արդէն իսկ կը մասնակցին մեծ մարզիկները, կ'ըսէ մրցաշարքի պատասխանատուներէն Քիթիլ Փեթրով»:

Ամէն տարի տեղի ունեցող այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը միշտ ալ կը բերին ոռու փայլուն մարզիկներ՝ Մարաթ Սաֆին եւ Եւկենի Բաֆելիքով:

Այս մրցաշարքը, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հոկտեմբեր 21էն 27, ունեցող տարին ըլլալով է, որ պիտի կատարուի: Այս տարի անոր համար յատկացուած գումարը 800 հազար տոլարէն բարձրացած է մէկ միլիոն տոլարի:

ՀԵԾԵԼԱՐՇԱԻ. ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱԶՔ

## ԱՐՄՍԹՐՈՆԿ ՇԱԳԱՒ ԴԵՂԻՆ ՇԱՊԻԿԸ. ԱՆ ԿԸ ՄԱՅ ԼԵՈՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ



Լէնս Արմսթրոնկ փոփոխուի վրայ կը հագնի դեղին շապիկը

- (Մ. Ն.) Եու. Ըս. Փոսթալ 4 ժամ 21' 57"
- 2.- Խոսեպա Պելոքի (Սպանիա) ՕՆՍԷ - Էրոսի 7" ուշ
- 3.- Ռոպերթո Հերաս (Սպանիա) Եու. Ըս. Փոսթալ 13" ուշ
- 4.- Ֆրանչէսքո Մանսետո (Սպանիա) Իպանետո 1' 16" ուշ
- Թիսթալի 1' 49" ուշ
- 10.- Խոսեպ Ալեյկետո (Փորթուգալ) ՕՆՍԷ - Էրոսի 1' 52" ուշ
- 11.- Իկոր Կոնկալէս Կալտէանո (Սպանիա) ՕՆՍԷ - Էրոսի 1' 54" ուշ
- Ընդհանուր դասաւորում
- 1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Ըս. Փոսթալ 40 ժամ 47' 38"
- 2.- Խոսեպա Պելոքի (Սպանիա) ՕՆՍԷ 1' 12" ուշ
- 3.- Իկոր Կոնկալէս Կալտէանո (Սպանիա) ՕՆՍԷ 1' 48" ուշ
- 4.- Ռեմոնտաս Ռումաս (Լիթվանիա) Լամիթո 3' 32" ուշ
- 5.- Սանթիակո Պոթերո (Քոլումբիա) Բելմէ 4' 13" ուշ
- Խումբերու դասաւորում
- 1.- ՕՆՍԷ 122 ժամ 30' 21"
- 2.- Եու. Ըս. Փոսթալ



Հեծելաճորդներ մէկ վայրկեան կը յարգեն մահացած 7 տարեկան տղային յիշատակը

շատակը, որ 10րդ հանգրուանին Կոնգացած էր ինքնաշարժի արկածի մը:

11րդ հանգրուանը, որ եղաւ շրջավայրին առաջին լեռնային հանգրուանը, եղաւ կարեւոր, գիտնալու համար, թէ արդեօք Արմսթրոնկ պիտի յաջողի՞ հանդիսանալ առաջին եւ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը խլել սպանացի Իկոր Կոնկալէս Կալտէանոյին: Այդպէս ալ պատահեցաւ եւ ամերիկացին փաստեց, թէ կը մնայ լեռնային հանգրուաններու թիւ 1ը. ան յաջողեցաւ 1' 48" առաւելութիւն մը ունենալ սպանացիին վրայ, որ նահանջեց 3րդ դիրքը: Խոսեպա Պելոքի, որ գրաւեց 2րդ դիրքը, հեծելաշարժին մնացեալ հանգրուաններուն յայտնապէս պիտի ըլլայ Արմսթրոնկի գլխաւոր մրցակիցը, թէեւ Կալտէանո կը պնդէ, թէ իրեն համար շրջավայրը ցարդ վերջ չէ գտած:

Յառաջիկայ հանգրուանները եւս պիտի ըլլան լեռնային, վատախաբար բաւական դժուարութիւններու դիմաց պիտի դնեն Կալտէանոն, որովհետեւ նա շատ հաւանաբար Արմսթրոնկ պիտի ըլլայ տիրապետողը իր մրցակիցներուն վրայ: Եօթը հանգրուան դեղին շապիկը իր մօտ պահելէ ետք, Կալտէանո երէկ վայր կ'ընթացաւ Արմսթրոնկի:

Այսօր տեղի կ'ունենայ 12րդ հանգրուանը՝ Լանմեպանէն Փլաթօ Տը Պէյ (199,5 քմ.): Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումին արդիւնքները.

1.- Լէնս Արմսթրոնկ

- 2.- Խոսեպա Պելոքի (Սպանիա) ՕՆՍԷ - Էրոսի 7" ուշ
- 3.- Ռոպերթո Հերաս (Սպանիա) Եու. Ըս. Փոսթալ 13" ուշ
- 4.- Ֆրանչէսքո Մանսետո (Սպանիա) Իպանետո 1' 16" ուշ
- Թիսթալի 1' 49" ուշ
- 10.- Խոսեպ Ալեյկետո (Փորթուգալ) ՕՆՍԷ - Էրոսի 1' 52" ուշ
- 11.- Իկոր Կոնկալէս Կալտէանո (Սպանիա) ՕՆՍԷ - Էրոսի 1' 54" ուշ
- Ընդհանուր դասաւորում
- 1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Ըս. Փոսթալ 40 ժամ 47' 38"
- 2.- Խոսեպա Պելոքի (Սպանիա) ՕՆՍԷ 1' 12" ուշ
- 3.- Իկոր Կոնկալէս Կալտէանո (Սպանիա) ՕՆՍԷ 1' 48" ուշ
- 4.- Ռեմոնտաս Ռումաս (Լիթվանիա) Լամիթո 3' 32" ուշ
- 5.- Սանթիակո Պոթերո (Քոլումբիա) Բելմէ 4' 13" ուշ
- Խումբերու դասաւորում
- 1.- ՕՆՍԷ 122 ժամ 30' 21"
- 2.- Եու. Ըս. Փոսթալ



11րդ հանգրուանին, հեծելաճորդները կը պայքարին լեռնային հանգրուանին

- Ռումաս (Լիթվանիա) Լամիթո-Տայի (նոյնը)
- Սըրվիս 3' 44" ուշ
- 3.- Բոֆիտիս 6' 38" ուշ
- 4.- Սի. Ըս. Սի. - Թիսթալի 7' 40" ուշ
- 5.- Բելմէ 8' 47" ուշ

## ՓԻՐԷՍԻ ՎԵՐԱԴԱՐՉՐ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՒԱՐՏԷՆ ԱՌԱՋ

Ֆրանսացի միջնապահ Ռոպերտ Փիլիս յայտնեց, թէ կը յուսայ, որ Սեպտեմբերին առաջ պիտի վերադառնայ դաշտ եւ միացայ Արսենալի իր խմբակիցներուն:

29 տարեկան ֆրանսացի միջնապային մարզիկը, որ անցեալ Մարտին վիրաւորեցաւ, սկզբունքով միջնապահ շտաբի վերջը պիտի չկարենար դաշտ գերկայանալ: Մակայն այնպէս կը թուի, որ անոր վերադարձը անելի շուտ տեղի պիտի ունենայ, որովհետեւ անոր ապաքինումի գշտմանը անելի արագացած են:

Անցեալ եղանակին Անգլիոյ տարուան լաւագոյն ֆուլբալիստի տիտղոսին տիրացած Փիլիս, անցեալ Մայիսին ենթարկուեցաւ ծունկի վիրաբուժութեան:

Արսենալի հետ, Փիլիս յաջողեցաւ բաւական լաւ եղանակ մը բոլորել, սակայն Անգլիոյ բաժակի քառորդ արտակարգին, Նիքիթալի դէմ տեղի ունեցած մրցումին վիրաւորուելով, իր մասնակցութիւնը չկրցաւ բերել 2002ի Մոնտիալին:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՆՈՐ ՄԱՐԶԻՉԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ՝ ԱՅՍՈՐ

Ֆրանսայի ֆուլբալի ֆետերասիոնին մօտիկ աղբիւրները յայտնեցին, թէ ֆետերասիոնի նախագահ Քլոտ Սիմոնէ արդէն իսկ սկսած է տեսակցութիւններ ունենալ չորս թեկնածուներու հետ, նշանակելու համար Ռոտէ Լըմէրի յաջորդը:

48 տարեկան նախկին միջնապային միջնապահ Ռոնէ Ժերար, որ Ռոտէ Լըմէրի օգնականն էր, եղաւ առաջին անգամ տեսակցութիւն ունեցողը Սիմոնէի հետ:

Սիմոնէ ապա տեսակցեցաւ Ռեմոն Տոմինէի հետ, որ 1993էն ի վեր Ֆրանսայի 21 տարեկանէն վարկրտներու ազգային խումբին մարզիչն է: Նշենք, թէ անոր «աշակերտները» եղած են Ջինետին Ջիտան եւ Քրիսթոֆ Տիւկարի, ապա՝ Թիերի Հանրի, Տալիտ Թրեպեկէ եւ Միքայէլ Սիլվեսթր:

Մնացեալ երկու թեկնածուներն են՝ Լիոնի մարզիչ Ժաք Սանթիերի եւ Ճափոնի ֆուլբալի ազգային խումբին մարզիչ Ֆիլիպ Թրուսիէ:

## ԼՈՒՐԵՐ՝ ՖՈՒԹՊՈՒԻ ԱՇԽԱՐՀԷՆ



Տէյվիտ Սիմըն, իր աղջկան՝ Ճորճինայի հետ

● ՖՐԱՆՍԱՅԻ յառաջապահ Նիքոլա Անելթա, որ նոր բարձրագոյն դասակարգ բարձրագոյն Մանչեսթըր Սիթիի միջնապային մրցումին մը հաստատեց (փոխան՝ 20,3 միլիոն տոլարի) խումբին հետ, հարցազրույցի մը ընթացքին յայտնեց, թէ կը յուսայ, որ Անգլիոյ ախոյեանութեան 2002-2003 եղանակին աւարտին իր կազմը անպայման երրօրեակն տոմս մը պիտի ապահովէ:

«2001-2002 եղանակին աւարտին Ա. դասակարգի ախոյեան հանդիսացած խումբ մը բարձրագոյն դասակարգին մէջ ալ նոյնը կրնայ իրագործել: Խումբին բոլոր մարզիկներն ալ այդ մէկը կատարելու պատրաստ են», կ'ըսէ Անելթա, որ անցեալ եղանակին Փարիզ Սէն Ժերմէնէն փոխ տրուած էր Լիվըրպոլի:

Մանչեսթըր Սիթի մտադիր է այս եղանակին աւարտին լքել իր դաշտը «Մէյն Ռոտ» եւ հաստատուիլ Մանչեսթըրի դաշտը, որ այս ամիս պիտի հրաւրենալէ Անկախ երկիրներու մրցումները:

● ԱՐՄԵՆԱԼԻ բերդապահ Տէյվիտ Սիմըն երէկ մէկ տարուան նոր պայմանագրութիւն մը ստորագրեց իր խումբին հետ, այսպիսով առնուազն մինչեւ 2002-2003 եղանակին աւարտը մնալով լոնտոնեան կազմին հետ:

Անգլիոյ ֆուլբալի ազգային խումբին բերդապահ Մոնտիալի քառորդ աւարտականին Պրազիլէն իր ստացած կոլին պատճառով թէեւ քննադատեց իր մամուլին կողմէ, սակայն Արսենալի մարզիչ Արսէն Վենկէսէն համաձայն, ան կը մնայ փորձառու բերդապահ մը եւ ամէն ճիգ ի գործ պէտք է դնէ, որպէսզի մոռնայ իր այդ ձախողութիւնը:

Անցեալ եղանակին, Արսենալի հետ տուալէ մը իրագործած Սիմըն, Մայիս 1990ին Քուինզ ֆարը Ռէյն-ճըրզէն փոխանցուած էր Արսենալի, փոխան՝ 2 միլիոն տոլարի: 73 անգամ Անգլիոյ ազգային խումբին շապիկը կրած Սիմըն, ցարդ 377 անգամ դաշտ ներկայացած է Արսենալի հետ:

● ԱՐՄԵՆԱԼԻ մարզիկներէն Թիերի Հանրի, որուն պայմանագրութեան աւարտին մնացած է երկու տարի, երէկ ֆրանսական «Լ. Էքսիփ» օրաթերթին հետ իր կատարած հարցազրույցին ընթացքին յայտնեց, թէ մտադիր է իր խումբին հետ մնալ մինչեւ 2006 եւ անոր հետ փոխադրուի նոր դաշտը (2006ին):

24 տարեկան Հանրի 2002ի Մոնտիալիին Ֆրանսայի ազգային խումբին ձախող արդիւնքներուն չուզեց անդրադառնալ, ըսելով, որ անորք այժմ կը պատկանին անցեալին, մինչ այժմ ինք ու իր ազգային խումբին խմբակիցները կը նային ապագային, փորձելով անելի լաւ արդիւնքներ ձեռք բերել:

● ԲՈՒՆԱՏՈՐԻ ազգային խումբին յառաջապահ Ակիլիսէն Տելկատո, երէկ ի վերջոյ կապի մէջ մտաւ իր ակումբին՝ Սառլիսէմբըրի հետ, բացատրութիւն տալով այն պատճառներուն մասին, թէ ինչո՞ւ ճշգրտած ժամանակին չէր միացած խմբակիցներուն, 2002-2003 եղանակին նախօրեակին փորձերէն բացակայած ըլլալով:

Ակումբին պատասխանատուներէն Պրայն Թրասթ յայտնեց, թէ 27 տարեկան Տելկատոյին ստացած է ֆաքս մը, ուր ան կ'ըսէ, թէ իր բացակայելուն պատճառը ֆիզիքական անկայունութիւնն է:

Տելկատո, որ ուշացած ըլլալուն պատճառով իր երկու շաբաթական կորսնցուց, յայտնեց, թէ հարգողակցութեան դժուարութիւն ունեցած էր: Ան նաեւ Նոյեմբերին փոխան 5,5 միլիոն տոլարի նասաքային անգլիական կազմին միանալէն ի վեր, միշտ ալ ծունկի հարցեր ունէր:

Նշենք, թէ այս շաբաթական սկիզբը, Սառլիսէմբըրն ՖիՅԱՆԻ խնդրած էր, որ օգտակար դառնայ իրենց, որպէսզի ան էքուստորէն վերադառնայ Բիլիսոնիս:

